ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/90

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝

Բ. Արամյանի (լիազորագիր, տրված՝ 18.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ /26/9889-2019 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 07.06.2019թ. թիվ 01/61-10801 գրության հիման վրա, 13.06.2019թ. թիվ /26/9889-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արմես Գրուպ»

ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/90 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.06.2019թ. թիվ 01/61-10801 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.01.2019թ. կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/15-1» ծածկագրով գնման պայմանագրի (հետայսու՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ էր սահմանված՝ 1-ին եռամսյակ՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 30 օրացույցային օրվա ընթացքում, 2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2019թ., 3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2019թ. և 4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2019թ.:

Ընկերության կողմից պատշաճ կատարվել են 1-ին և 2-րդ եռամսյակների համար ստանձնած պարտավորությունները, սակայն Ընկերության տնօրենը 17.05.2019թ. գրությամբ տեղեկացրել է, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակներն այլևս չեն արտադրվում ՀՀ –ում և այդ հիմքով առաջարկվել է մատակարարել 180 մլ. և 1.7 գ. քաշով մեկանգամյա օգտագործման բաժակներ, (որը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին): Հակառակ դեպքում՝ խնդրել է լուծել Պայմանագիրը:

Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 408-րդ հոդվածները և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի հրաժարվել է պայմանագրային պարտավորությունների կատարումից, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/90 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.01.2019թ. կնքվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/15-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի

N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 30.05.2019թ. թիվ 61/10180 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ /26/9889-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 07.06.2019թ. թիվ 01/61-10801 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.01.2019թ. կնքվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/15-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատակարարել 120 000 հատ մեկանգամյա օգտագործման բաժակներ, որից 30 000 հատը՝ 1-ին եռամսյակում, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 30 օրացույցային օրվա ընթացքում, 30 000 հատը՝ 2-րդ եռամսյակում, մինչև 30.06.2019թ.,

30 000 հատը՝ 3-րդ եռամսյակում, մինչև 30.09.2019թ. և 30 000 հատը՝ 4-րդ եռամսյակում, մինչև 25.12.2019թ.:

Ընկերության կողմից սահմանված կարգով Պատվիրատուին մատակարարվել են 1-ին և 2-րդ եռամսյակներում մատակարարման ենթակա ընդհանուր 60 000 հատ մեկանգամյա օգտագործման բաժակ:

Միևնույն ժամանակ Երևանի քաղաքապետարանին ուղղված 17.05.2019թ. գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/15-1» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրին համապատասխան մեկանգամյա բաժակներ ՀՀ-ում այլևս չեն արտադրվում:

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի համաձայնության դեպքում, Ընկերությունը կարող է մատակարարել 180 մլ. և 1.7 գ. քաշով բաժակներ, հակառակ դեպքում՝ խնդրել է լուծել Պայմանագիրը:

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 30.05.2019թ. թիվ 61/10180 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ քանի որ Ընկերությունը փաստացի հրաժարվել է պայմանագրային պարտավորությունների կատարումից, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով համապատասխան հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ապրանքի մատակարարման Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.01.2019թ. կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/15-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում մատակարարել ապրանք: Ընկերությունը սահմանված կարգով 1-ին և 2-րդ եռամսյակներում Պատվիրատուին մատակարարել է Պայմանագրով նախատեսված ապրանքը, սակայն համապատասխան գրությամբ

հրաժարվել է 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում Պայմանագրով նախատեսված 30000-ական մեկանգամյա օգտագործման բաժակները մատակարարելու պարտականությունը կատարելուց՝ դրանով իսկ հրաժարվելով Պայմանագիրը կատարելուց:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ /26/9889-2019 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**